

յատակ կը տեսնուին. մին Մայր Տաճարին աջակողմը, միւսը՝ ձախակողմը:

\*\*\*

Հիմնովին կառուցանելու, վերանորոգելու զանազան այս ծախսերը գոցելու համար առաքինազարդ Հայրապետը յաճախակի ճանապարհորդելու պարտաւորուած էր:

Այսպէս է որ 1652 թուականին զայն կը գտնենք Երուսաղէմ և յաջորդ տարին Կ. Պօլիս, ուսկից Էջմիածին կը վերադառնայ « Բագում սպասիւք, զարդուք և զրամովք զորս մատուցին նմա ժողովուրդը տեղւոյն. ընդ որս և այլ ոմն՝ երեւելի և ճոխ, որոյ անուն կոչուի Անտոն Զէլէպի » բնիկ պրուսացի որ մեծագումար դրամ կը խոստանայ և կու տայ « վասն շինելոյ Էջմիածին զզանգակատուն մեծ և ահեղ » որուն հիմնարկութեան ձեռնամուխ կ'ըլլայ՝ հազիւ Էջմիածին հասած « ի թուին Հայոց ոճգ, 1654 թուականին յաւուրս Աղուհացից, յարեւմտից կուսէ մեծ Տաճարին՝ ի վերայ դրանն կից յորմն. այլ մինչչեւ աւարտեալ էր եհաս նմա վախճան կենաց »:

Անտեղի չէր, ուրեմն, Բուն Բարեկենդանի կէսօրուան ճաշին նախագահող Հայրապետին առողջութեան նկատմամբ յայտնած կասկածս: Արդարեւ Աղուհացից չորրորդ կիրակին՝ « յորժամ նստեալ յեկեղեցւոջ բարոզէր... և վերջացեալ զքարոզն և օրհնեալ զժողովուրդն գնաց ի սենեակ իւր և հիւանդացեալ, կը զրէ պատմիչը, անկաւ ի մահիճս. և յետ ութն

աւուրց՝ ի հինգերորդ կիրակէի Աղուհացից աւանդեաց զհոգին յամի տեառն 1655 ի թուին Հայոց ոճգ, ի Մարտի 25, ի վաթսուն և երեք ամաց, յետ կալոյ ամս ԻԲ [22] և ամիս իրր 3 »:

Միաբանները կը փափաքին իրենց բազմավաստակ Հայրապետը իր հիմնարկած զանգակատան ներքեւ թաղել, որուն ստորին մասը միայն շինուած էր, բայց Երեւանի Մահմատ Ղուլիխան նախարարին արգելքին վրան՝ որ սկիզբէն ի վեր անոր շինութեանը հակառակած էր « և սպառնայր եւս քակել զայն, և յերկարել բանից, հուսկ յետոյ՝ զկնի վեց աւուրց տարեալ թաղեցին զնա ի Տաճար Սրբուհայն Հոփսիմիայ՝ ի հիւսիսակողմն խորանին »:

Զանգակատան շինութիւնը ժամանակ մը անկատար մնալէն յետոյ Հաղբակեցիին յաջորդը, Նոր Զուգայեցի նշանաւոր Յակոբ վարդապետը, այն որ Ս. Ստեփանոս Նախավկային Տաճարը կոփածոյ քարերով, խաչաձեւ և գմբեթայարկ վերականգնած ըլլալուն համար արդէն մեծ համբաւ շահած էր, յաջողեցաւ աւարտել՝ չարամիտ Ղուլիխանին պաշտօնանկութենէն յետոյ:

Այս եղանակով կը կատարուէր Պրուսացի մեծանձն Ազգայինին փափաքը:

Անտոն Զէլէպիին առատաձեռնութեան և հայրենասիրութեան բարի օրինակները տակաւին այսօր կը կրկնուին, օտար աստղերու ներքեւ անգամ, միշտ և միշտ ի պատիւ Հայ Ազգին:

Պոօֆ. Լեւոն ԿԻՐԵՂԵԱՆ

19 Յուն. 1948

(չարունակելի)

ՏՈՒՆԿԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ  
ՀԱՅԵՐԷՆ ԱՆՈՒՆԵՐԸ

## ՍՈՐԵԿ կամ ՍՈՐՈՒԿ

Պէտք չէ շփոթել սորեկը սատրեկի՛ն հետ թէեւ երկուքն ալ կը պատկանին խաչազգիներու (crucifères) մեծ ընտանիքին:

Ասորեկ է *Eruca Sativa* L. ֆր. Roquette զոր թուրքերէն կը կոչեն Ռոքքա սալարա և կը գործածուի իբրեւ աղցան բուսն համով:


Պէտք չէ շփոթել նաեւ « Sorgho »-ին հետ նմանաձայնութեան պատճառով. « Sorgho »-ն (*Sorghum vulgare* Pers. = *Andropogon Sorghum* Brot.) սիզաբոյսերու ցեղէն է (graminées), ֆրանսերէն կը կոչուի նոյնպէս Millet à balai, հայերէն հաւամրգի կը համարուի (տես Մխիթար Գօշ, Առակ ԻԵ): Այս տունկէն կը շինեն ցախաւել տան գործածութեան համար, հատիկները կու տան հաւերուն և Ալճէրիի մէջ կը դնեն հացի մէջ. այս միջոցիս ֆրանսայի մէջ հացերն ալ կը պարունակեն « Sorgho »-ի ալիւր:

Սորեկը կամ սորոշկը խաչազգի բոյս մըն է իւղաբեր, *Cameline* կը կոչուի ֆրանսերէն, այսինքն փոքր կամ կարճ կտաւ, կը բուսնի առ հասարակ կտաւի դաշտերու մէջ կամ հունձքի արտերու մէջ և շատ անգամ այնքան առատօրէն՝ որ կը խեղդէ կտաւի ցանքը, փոքր դեղին ծաղիկներ ունի, որոնք ցօղունին ծայրը երկար ողկոյզ կը կազմեն. տարեւոր բոյս է, կը ծաղկի ամրան սկիզբը:

Երեք գլխաւոր տեսակները կան.

- 1) *Camelina Sativa* Crantz, Մշակուած սորոշկ որ կը կոչուի նոյնպէս շալիկ՝ Շիրակի մէջ, սորոպուր Արարատեան գաւառի մէջ, սորի վանայ մէջ:
- 2) *Camelina Sylvestris* Wall. վայրի սորոշկ, կը բուսնի հունձքի արտերուն և մշակուած դաշտերուն մէջ:
- 3) *Camelina Foetida* Fries (= *C. Dentata* Pers.) գարշահոտ սորոշկ, կը բուսնի կտաւի արտերու մէջ, տարածուած է ֆրանսայի, մանաւանդ արեւմտեան և կեդրոնական Եւրոպայի մէջ:

Սորոկէն կը հանեն ձէթ որ դառն է և չի



Սորեկ գարշահոտ  
*Camelina Foetida*

Ս. մշակեալ  
*Cam. Sativa*

Ս. լինծային  
*Cam. Sylvestris*



